ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/26

ք. Երևան **08 սեպտեմբերի 2022թ.**

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ի. Օսիպյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հազարաշեն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ռ. Իգիթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ **Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված բակային տարածքների բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___ 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 3 728 000 (երեք միլիոն յոթ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տակը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է __15__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Հազարաշեն» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	0014 ք. Երևան, Պ. Սևակի, 1
Կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 900022750385	Հ/հ 11500821114211
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 01816381
Ի. Օսիպյան ----------	Ռ. Իգիթյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 08 » սեպտեմբեր 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/26 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	ընդհանուր գինը	մատակարարման	
						հասցեն	ժամկետը
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման աշխատանքներ		Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: -Ապահովել հաշմանդամների և բնակչության սակավարժ խմբերի մատչելիությունը ամբողջ տարածքում -Բարեկարգման ենթակա տարածքում (անհրաժեշտության դեպքում) կատարել ինժեներական և երկրաբանական ուսումնասիրություն: -Ղեկավարվել առաջարկվող աշխատանքների ցանկով, կատարել տեղատեսություն՝ աշխատանքի ծավալները պատկերացնելու համար: -Ղեկավարվել առաջարկվող աշխատանքների ցանկով, աշխատանքի ծավալների ճշտգրման համար կատարել տեղատեսություն, տեղատեսության արդյունքում առաջարկվող նախագծի էսքիզային տարբերակը և/կամ տարբերակները, մինչև նախագծի թողարկումը, աշխատանքների ընթացքում քննարկել Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ և նախագծում նախատեսված աշխատանքներից նախահաշվում ներառել համաձայնեցված ծավալներով աշխատանքները: -Նախագծերը կազմելիս ղեկավարվել Եվրասիական տնտեսական միության <<Մանկական խաղահրապարակների համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին>> (ԵՏՄ ՏԿ 042/2017) տեխնիկական կանոնակարգով, ընդունված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 21 որոշմամբ: -Ներկայացնել առաջարկ աշխատանքների կատարման համար պահանջվող արտոնագրերի, լիցենզիաների, անհրաժեշտ տեխնիկական միջոցների, աշխատանքային ռեսուրսների մասնագիտական որակավորման պահանջների վերաբերյալ: -Նախագծման աշխատանքների վճարումը կիրականացվի նախագծի վերաբերյալ դրական փորձաքննության եզրակացություն ստանալուց հետո: -Ծավալաթերթ – նախահաշվում առանձնացնել ըստ աշխատանքների տեսակների գումարները և դրանց ընդհանուր գումարի համեմատական տոկոսները, ներառելով միայն ԱԱՀ-ը: -Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 7 օրինակից և էլեկտրոնային կրիչով, հայերեն և ռուսերեն լեզուներով, 3D եղանակով:	դրամ	3728000	ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30-րդ օրացույցային օրը ներառյալ

1	Արտաշիսյան 59, 59/1, 65, 61, 67, 63, 63/1 և Չեխովի 48, 50, 52 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	71241200/871	• Հին եզրաքարերի, ցանկապատերի, կառույցների և այլ կառուցվածքների քանդում • Տարածքի մաքրում և շին աղբի տեղափոխում • Հողի քանդում հարթեցման նպատակով • Տարածքի հարթեցում • Նոր եզրաքարերի տեղադրում • Ա/բետոնե ծածկույթի իրականացում • Անցուղիների կառուցում և սալիկապատում, գունավոր սալիկներով /50 մմ, ռետրո տեսակի/ • Նստարանների տեղադրում • Ջրուցատաղավարի տեղադրում • Աղբարկղերի տեղադրում • Ցայտաղբյուրի տեղադրում/վերանորոգում • Աստիճանների և թեքահարթակի կառուցում • Լուսավորության ցանցի կառուցում /արևային ԼԵԴ լույսերի տեղադրում/ • Ոռոգման ցանցի կառուցում • Բետոնե հատակի պատրաստում Բ-15 դասի բետոնով, ամրանավորումով • Ռետինե հատակի կամ արհեստական խոտածածկի պատրաստում /տեղադրում • Մանկական (սպորտային) խաղերի տեղադրում • Ֆուտբոլի դաշտի հատակի կառուցում, պատրաստում և/կամ տեղադրում, ռետինե հատակով կամ արհեստական խոտածածկով, նյութերը և տեսակը նախապես համաձայնեցնելով վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ • Մանկական խաղահրապարակի կառուցում, կահավորում • Ցանկապատի և բազրիքի տեղադրում		235000	
2	Մայիսի 9-ի 51 և Չեխովի 8/1 շենքերի միացյալ բակի բարեկարգում	71241200/872			240000	
3	Արշակունյաց 50 և 50/1 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	71241200/875			119000	
4	Արշակունյաց 52 և 52/1 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	71241200/876			119000	
5	Արշակունյաց 48/2 և Արշակունյաց 48/3 շենքերի միացյալ բակի բարեկարգում	71241200/881			135000	
6	Շարուրի 24, 24/2, 24/3 շենքերի միացյալ բակ	71241200/882			149000	
7	Շիրակի 2 և Արարատյան 64, 66 շենքերի միացյալ բակ	71241200/883			279000	
8	Շիրակի 4-րդ նրբ 6 և 10 շենքերի միացյալ բակի բարեկարգում	71241200/885			79000	
9	Ն. Շենգավիթ 11 փող. 37/3 և 37/1 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	71241200/1113			111000	
10	Արշակունյաց 47 համալիր դաշտի կառուցում	71241200/894			82000	

11	Ս. Տարոնցու նրբ. 10, 12 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	71241200/896			119000	
12	Եղ. Թադևոսյան 12/5 շենքի բակի բարեկարգում	71241200/897			135000	
13	Եղ. Թադևոսյան 19 շենքի բակի բարեկարգում	71241200/898			135000	
14	Եղ. Թադևոսյան 18, 20 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	71241200/899			118000	
15	Եղ. Թադևոսյան 14, 16 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	71241200/900			119000	
16	Արշակունյաց 48/3 շենքի հարակից տարածքի բարեկարգում	71241200/873	Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: -Ապահովել հաշմանդամների և բնակչության սակավարժ խմբերի մատչելիությունը ամբողջ տարածքում -Բարեկարգման ենթակա տարածքում (անհրաժեշտության դեպքում) կատարել ինժեներական և երկրաբանական ուսումնասիրություն: -Ղեկավարվել առաջարկվող աշխատանքների ցանկով, կատարել տեղատեսություն՝ աշխատանքի ծավալները պատկերացնելու համար: -Ղեկավարվել առաջարկվող աշխատանքների ցանկով, աշխատանքի ծավալների ճշտգրման համար կատարել տեղատեսություն, տեղատեսության արդյունքում առաջարկվող նախագծի էսքիզային տարբերակը և/կամ տարբերակները, մինչև նախագծի թողարկումը, աշխատանքների ընթացքում քննարկել Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ և նախագծում նախատեսված աշխատանքներից նախահաշվում ներառել համաձայնեցված ծավալներով աշխատանքները: -Նախագծերը կազմելիս ղեկավարվել Եվրասիական տնտեսական միության <<Մանկական խաղահրապարակների համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին>> (ԵՏՄ ՏԿ 042/2017) տեխնիկական կանոնակարգով, ընդունված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 21 որոշմամբ: -Ներկայացնել առաջարկ աշխատանքների կատարման համար պահանջվող արտոնագրերի, լիցենզիաների, անհրաժեշտ տեխնիկական միջոցների, աշխատանքային ռեսուրսների մասնագիտական որակավորման պահանջների վերաբերյալ:		155000	
17	Արշակունյաց 44/2 շենքի հարակից տարածքի բարեկարգում	71241200/874			140000	
18	Ս. Տարոնցու նրբ. 11 շենքի հարակից տարածքի բարեկարգում	71241200/877			119000	
19	Բագրատունյաց 33 շենքի հարակից տարածքի բարեկարգում	71241200/878			73000	
20	Շևչենկո 1 շենքի բակի բարեկարգում	71241200/879			73000	
21	Շարուրի 10 և 12 շենքերի միացյալ բակի բարեկարգում	71241200/880			73000	
			-Նախագծման աշխատանքների վճարումը կիրականացվի նախագծի վերաբերյալ դրական փորձաքննության եզրակացություն ստանալուց հետո:			

			-Ծավալաթերթ – նախահաշվում առանձնացնել ըստ աշխատանքների տեսակների գումարները և դրանց ընդհանուր գումարի համեմատական տոկոսները, ներառելով միայն ԱԱՀ-ը: -Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 7 օրինակից և էլեկտրոնային կրիչով, հայերեն և ռուսերեն լեզուներով, 3D եղանակով:• Հին եզրաքարերի, ցանկապատերի, կառույցների և այլ կառուցվածքների քանդում • Տարածքի մաքրում և շին աղբի տեղափոխում • Հողի քանդում հարթեցման նպատակով • Տարածքի հարթեցում • Նոր եզրաքարերի տեղադրում • Ա/բետոնե ծածկույթի իրականացում • Անցուղիների կառուցում և սալիկապատում, գունավոր սալիկներով /50 մմ, ռետրո տեսակի/ • Նստարանների տեղադրում • Զրուցատաղավարի տեղադրում • Աղբարկղերի տեղադրում • Ցայտաղբյուրի տեղադրում/վերանորոգում • Աստիճանների և թեքահարթակի կառուցում • Լուսավորության ցանցի կառուցում /արևային ԼԵԴ լույսեր/ • Ոռոգման ցանցի կառուցում • Բետոնե հատակի պատրաստում Բ-15 դասի բետոնով, ամրանավորումով • Ռետինե հատակի կամ արհեստական խոտածածկի պատրաստում /տեղադրում • Մանկական (սպորտային) խաղերի տեղադրում • Մանկական խաղահրապարակի կառուցում, կահավորում • Ցանկապատի և բազրիքի տեղադրում, համաձայնեցնելով			
22	Շիրակի 21 շենքի բակի բարեկարգում	71241200/884			79000	
23	Աէրացիա 2/5 շենքի բակի բարեկարգում	71241200/886			118000	
24	Աէրացիա 2/6 շենքի բակի բարեկարգում	71241200/887			119000	
25	Ն. Շենգավիթ 11 փող. 35, 35/1 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	71241200/889			128000	
26	Ն. Շենգավիթ 11 փող. 39 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	71241200/890			79000	
27	Չեխովի 29 շենքի բակի բարեկարգում	71241200/1115			82000	

28	Մանանդյան 29 շենքի բակի բարեկարգում	71241200/892			119000	
29	Վ. Շենգավիթ 2-րդ փող. 7 և 7/2 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	71241200/893			88000	
30	Արտաշիսյան 62 շենքի բակի բարեկարգում	71241200/895			109000	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900022750385
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հազարաշեն» ՍՊԸ
0014 ք. Երևան, Պ. Սևակի, 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/հ 11500821114211
ՀՎՀՀ 01816381

Ռ. Իգիթյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 08 » սեպտեմբեր 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/26 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	Արտաշիսյան 59, 59/1, 65, 61, 67, 63, 63/1 և Չեխովի 48, 50, 52 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	235000	235000	235000	235000	235000
2.	Մայիսի 9-ի 51 և Չեխովի 8/1 շենքերի միացյալ բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	240000	240000	240000	240000	240000
3.	Արշակունյաց 50 և 50/1 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	119000	119000	119000	119000	119000
4.	Արշակունյաց 52 և 52/1 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	119000	119000	119000	119000	119000
5.	Արշակունյաց 48/2 և Արշակունյաց 48/3 շենքերի միացյալ բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	135000	135000	135000	135000	135000

6.	Շարուրի 24, 24/2, 24/3 շենքերի միացյալ բակ	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	149000	149000	149000	149000	149000
7.	Շիրակի 2 և Արարատյան 64, 66 շենքերի միացյալ բակ	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	279000	279000	279000	279000	279000
8.	Շիրակի 4-րդ նրբ 6 և 10 շենքերի միացյալ բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	79000	79000	79000	79000	79000
9.	Ն. Շենգավիթ 11 փող. 37/3 և 37/1 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	111000	111000	111000	111000	111000
10.	Արշակունյաց 47 համալիր դաշտի կառուցում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	82000	82000	82000	82000	82000
11.	Ս. Տարոնցու նրբ. 10, 12 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	119000	119000	119000	119000	119000
12.	Եղ. Թադևոսյան 12/5 շենքի բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	135000	135000	135000	135000	135000
13.	Եղ. Թադևոսյան 19 շենքի բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	135000	135000	135000	135000	135000
14.	Եղ. Թադևոսյան 18, 20 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	118000	118000	118000	118000	118000
15.	Եղ. Թադևոսյան 14, 16 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	119000	119000	119000	119000	119000

16.	Արշակունյաց 48/3 շենքի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	155000	155000	155000	155000	155000
17.	Արշակունյաց 44/2 շենքի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	140000	140000	140000	140000	140000
18.	Ս. Տարոնցու նրբ. 11 շենքի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	119000	119000	119000	119000	119000
19.	Բագրատունյաց 33 շենքի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	73000	73000	73000	73000	73000
20.	Շևչենկո 1 շենքի բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	73000	73000	73000	73000	73000
21.	Շարուրի 10 և 12 շենքերի միացյալ բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	73000	73000	73000	73000	73000
22.	Շիրակի 21 շենքի բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	79000	79000	79000	79000	79000
23.	Աէրացիա 2/5 շենքի բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	118000	118000	118000	118000	118000
24.	Աէրացիա 2/6 շենքի բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	119000	119000	119000	119000	119000
25.	Ն. Շենգավիթ 11 փող. 35, 35/1 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	128000	128000	128000	128000	128000

26.	Ն. Շենգավիթ 11 փող. 39 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	79000	79000	79000	79000	79000
27.	Չեխովի 29 շենքի բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	82000	82000	82000	82000	82000
28.	Մանանդյան 29 շենքի բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	119000	119000	119000	119000	119000
29.	Վ. Շենգավիթ 2-րդ փող. 7 և 7/2 շենքերի հարակից տարածքի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	88000	88000	88000	88000	88000
30.	Արտաշիսյան 62 շենքի բակի բարեկարգում	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	109000	109000	109000	109000	109000
ընդամենը														**3728000**

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900022750385
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հազարաշեն» ՍՊԸ
0014 ք. Երևան, Պ. Սևակի, 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/հ 11500821114211
ՀՎՀՀ 01816381

Ռ. Իգիթյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » սեպտեմբերի 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/26 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » սեպտեմբերի 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/26 ծածկագրով
պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռախոս՝ 374 10 592020
Ֆաքս՝
Էլ. փոստ՝

Տպված է՝ 06/09/2022 10:11 (UTC+04:00)

Բյուջետային փոխանցում N 000576

Ամսաթիվ	**06/09/2022**	Նույնացուցիչ	**ef90c873-80ca-4dfd-a375-23bd0b0202f7**
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
11500821114211	**900008000698**	**AMD**	**559,200.00**
Վճարողի անվանում	**ՀԱՋԱՐԱՇԵՆ ՍՊԸ**		
Վճարողի բանկ	**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ**		
ՀՎՀՀ	**01816381**		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	**14**		
Շահառուի անվանում	**Կենտրոնական գանձապետարան**		
Գումարը բառերով	**Հինգ հարյուր հիսունինը հազար երկու հարյուր դրամ**		
Նպատակ	**ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/26 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովում**		

Ստորագրող	Robert Igityan
Ստորագրության կարգ	I, II
Ամսաթիվ	06/09/2022 10:08:50.260
Սարքի անվանում	SMS
Սարքի սերիալ N	37494080825
Ստորագրման տվյալ	SMS
Ստորագրություն	54730

2 ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ ԿՈՄԻՏԱՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARMBUSINESSBANK CJSC KOMITAS BRANCH

«ՀԱՋԱՐԱՇԵՆ» 01816381

Կատարված է

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռախոս՝ 374 10 592020
Ֆաքս՝
Էլ. փոստ՝

Տպված է՝ 06/09/2022 10:12 (UTC+04:00)

Բյուջետային փոխանցում N 000577

Ամսաթիվ	**06/09/2022**	Նույնացուցիչ	**a07e521a-f01b-45a1-bd3f-c7ad7be61aee**
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
11500821114211	**900008000664**	**AMD**	**372,800.00**
Վճարողի անվանում	**ՀԱՃԱՐԱՇԵՆ ՍՊԸ**		
Վճարողի բանկ	**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ**		
ՀՎՀՀ	**01816381**		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	**14**		
Շահառուի անվանում	**Կենտրոնական գանձապետարան**		
Գումարը բառերով	**Երեք հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր դրամ**		
Նպատակ	**ԵԲ-ՀԲՄԽԱՃԶԲ-22/26 ծածկագրով պայմանագրի՝ պայմանագրի ապահովում**		

Ստորագրող	Robert Igityan
Ստորագրության կարգ	I, II
Ամսաթիվ	06/09/2022 10:11:03.160
Սարքի անվանում	SMS
Սարքի սերիալ N	37494080825
Ստորագրման տվյալ	SMS
Ստորագրություն	24126

2 ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ ԿՈՄԻՏԱՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARMBUSINESSBANK OJSC KOMITAS BRANCH

«ՀԱՃԱՐԱՇԵՆ» 01816381

Կատարված է

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 000579 [1536193838]

PAYMENT ORDER

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ՊԿ\ID **1520**

ARMBUSINESSBANK CJSC Ամսաթիվ\Date **06/09/22 15:51**

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount	
11500821114211	**900008000664**	**AMD**	**51,200.00**
[302020]			

Վճարող\Remitter
ՀԱԶԱՐԱՇԵՆ ՍՊԸ
HAZARASHEN LTD

Անձը հաստ.փաստթ.\ID Number **AS0543731 003 15/03/2019**

Վճարողի բանկ\Remitter's Bank
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ARMBUSINESSBANK CJSK

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code **1401816381**

Շահառու\Beneficiary
Կենտրոնական գանձապետարան

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Գանձապետական բաժանմունք
Treasure division

ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ ԿՈՄԻՏԱՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 2 ARMBUSINESSBANK CJSC KOMITAS BRANCH

Գումարը բառերով\Amount in Words
Հիսունմեկ հազար երկու հարյուր դրամ

Նպատակ\Details
ԵՔ-ՀԲՄԽԱՀՋԲ-22/26 ծածկագրով պայմանագրի՝ պայմանագրի ապահովում

Վճարողի ստորագ. √ Կատարող **Ինտերնետ բանկ ավտոմատ մշակում**
Remitter's Sign. Maker

ՀԱՇԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՕՐԴԵՐ\ACCOUNTING ENTRY N 000579 [1536193838]

Դեբետ\Debit		Կրեդիտ\Credit		Արժ	Գումար\Amount Նիշ
3020200	821114211	3930000	1670005	AMD	51,200.00

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 000578 [754542297]

PAYMENT ORDER

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

ARMBUSINESSBANK CJSC

ՊԿ\ID 1520

Ամսաթիվ\Date 06/09/22 15:51

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount	
11500821114211	900008000698	AMD	76,800.00
[302020]			

Վճարող\Remitter

ՀԱԶԱՐԱՇԵՆ ՍՊԸ

HAZARASHEN LTD

Անձը հաստ.փաստթ.\ID Number AS0543731 003 15/03/2019

Վճարողի բանկ\Remitter's Bank

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

ARMBUSINESSBANK CJSK

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 1401816381

Շահառու\Beneficiary

Կենտրոնական գանձապետարան

Շահառուի բանկ\Beneficiary's Bank

Գանձապետական բաժանմունք

Treasure division

2 ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ ԿՈՄԻՏԱՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ARMBUSINESSBANK CJSC KOMITAS BRANCH

Գումարը բառերով\Amount in Words

Յոթանասունվեց հազար ութ հարյուր դրամ

Նպատակ\Details

ԵՔ-ՀԲՄԽԱՀՁԲ-22/26 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովում

Վճարողի ստորագ. √
Remitter's Sign.

Կատարող Ինտերնետ բանկ ավտոմատ մշակում
Maker

ՀԱՇՎԵՊՈՒՄՆԵՐԻ ՕՐԴԵՐ\ACCOUNTING ENTRY N 000578 [754542297]

Դեբետ\Debit		Կրեդիտ\Credit		Արժ	Գումար\Amount Նիշ
3020200	821114211	3930000	1670005	AMD	76,800.00